ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հուլիսի 2023 թվականի N: 261-Ա. ք.Գյումրի

ՄԵՐՈՒԺԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ «ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱԿԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժդ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի N 539-Ն որոշմամբ սահմանված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգի և չափորոշիչների» 71-րդ, 80-րդ և 81-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 11-ի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերուժան Մինասյանին 2023 թվականի հուլիսի 13-ից նշանակել «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

2. 2023 թվականի հուլիսի 13-ից դադարեցնել Մերուժան Մինասյանի՝ «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունները:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝